

ՍԵԴԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ ՏԱՎՈՒՇԻՑ
(Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հավվագյուտ մարդու կարող է բախտ վիճակվել դառնալու իր ժամանակակիցների ստեղծագործության և բացառիկ մեծարանքի առարկան: Այդպիսիներից մեկն էր ԺԹ դարի հայտնի հոգևոր գործիչ և մանկավարժ Գարեգին Գրիգորի Մուրադյանը՝ հետագայում Մելքիսեդեկ արքեպիսկոպոս:

Անկասկած շատերն են խանդավառվել Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհին» վեպի քույր Աննայի ուսուցիչ Գարեգինի կերպարով, հիացել Պ. Պռոշյանի «Սկիպքն երկանց» վեպի հերոսների հայրենասիրական նախաձեռնություններով: Մ. Աղաբեկյանը գրել է «Գարեգին» խորագրով դրամա և նվիրել Գ. Մուրադյանին: Իրենց սրտի խոսքն են ասել նաև Ղ. Աղայանն ու Ռաֆֆին, Ա. Արփիարյանն ու Ռ. Որբերյանը և շատ ուրիշներ:

Պատմական Տավուշ աշխարհի՝ այժմ Շամշադինի շրջանի Թովուլ գյուղում 1836 թվականին, քահանայի ընտանիքում է ծնվել Գարեգինը: Նրա հայրը՝ Գրիգորը, սովորել է և սարկավագ ձեռնադրվել Հաղպատի վանքում 1824 թվականի դեկտեմբերի 20-ին, Առաքել եպիսկոպոսի կողմից: Իսկ 1831 թվականի հոկտեմբերի 20-ին Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանի կողմից Զորաթան գյուղի եկեղեցում ձեռնադրվել է քահանա:

Այսպիսով, Գարեգինի հայրը իր ժամանակի գրագետ, գիր ու կրթություն սիրող մարդ էր: Նա իր տանը գրագիտություն էր սովորեցնում ոչ միայն իր, այլև գյուղի մյուս երեխաներին:

Հայրը տեսնելով որդու՝ Գարեգինի արտակարգ ընդունակությունները, սերն ու

ձգտումը դեպի ուսումը, նրան տալիս է Սանահնի վանքի ժառանգավորաց դպրոցը: Երկու տարի սովորելով, Գարեգինը բավականին կայուն գիտելիքներ է ձեռք բերում: Նրա մասին գրված է, որ «Բավական հըմտանալով հայերեն լեզվի և կրոնի ուսուցման մեջ, հաջողությամբ ավարտեց հիշյալ դպրոցը: Նա արդեն գիտեր Չամչյանի քերականության առաջին մասը, գիտեր թարգմանել Նոր Կտակարանից չորս Ավետարանները և Գործք Առաքելոցը, իսկ Հին Կտակարանից՝ Ծննդոց և Ելից գրքերը և բավական անսխալ գրել»[1]:

12 տարեկան հասակում հայրը նրան տանում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոց:

1851 թվականին դպրոցի տեսուչ Կ. Շահնազարյանը մեկնում է արտասահման: Ներսես կաթողիկոսի կողմից Թիֆլիս է հրավիրվում հայտնի համալսարանական ուսուցիչ, Եվրոպայում կրթություն ստացած Պետրոս Շանշյանցը և ստանձնում դպրոցի տեսչության պաշտոնը:

Ընդունակ Գարեգինը այնպես է սովորում, որ կարճ ժամանակից հետո արժանանում է ուսուցիչների և հատկապես Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի ուշադրությանը: Եվ երբ Պ. Շանշյանցի խորհրդով և Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հովանավորությամբ դպրոցին կից բացվում է գիշերօթիկ բաժին, 10 ընտրյալ աշակերտներից մեկը լինում է Գարեգինը: Այդ պահը այնքան ուժեղ է տպավորվել մատաղ սանի հոգում, որ տարիներ հետո նա գրել է. «Չեմ մոռացած, այն որ սուրբ ձեռն՝ երբ սաներու ընտրության ժամանակ գլխիս վրա դրավ Ս. Հայրապետն և ասաց. մին այս մանուկն, և առաջին անգամ արձանագրել տվավ իմ անունը, սա Գարեգինն է իմ ուված մարդը, սա՛ պետք է մեր բարձր հոգևորականներից մինը լինի»[2]:

Դպրոցի տեսչի և վարչության որոշմամբ սաները պետք է մասնակցեին եկեղեցական արարողությանը: Ընտրյալների մեջ էին Գ. Մուրադյանը և Հովհաննես (Պերճ) Պոռոշյանը: Գարեգինը հմտացել էր գրաբարի մեջ, որ ընթերցումը պերճաշուք էր, և դրանով իսկ մեծ ժողովրդականություն վայելեց Թիֆլիսում:

Պ. Պոռոշյանի հիանալի մեկնաբանությամբ այդ շրջանը Ներսիսյան դպրոցի ոսկեդարն էր, լուսավոր գաղափարների և բարձր բարոյականության շրջանը: Եվ այդ ոսկեդարի սաների մեծ մասը դարձան շնորհալի գործիչներ. Գարեգին Մուրադյան, Պ. Պոռոշյան, Ղ. Աղայան և ուրիշներ դարձան երդվյալ, անձնուրաց հայրենասերներ:

Գարեգինը Ներսիսյան դպրոցն ավարտեց լավ հայագետի և ընտիր ճառախոսի համբավով և անմիջապես նշանակվեց նույն դպրոցում որպես վերակացու և հայոց լեզվի ու հայոց պատմության ուսուցիչ: Նա միաժամանակ ձրիաբար թվաբանություն դասավանդեց մասնավոր օրիորդաց դպրոցներում ու տներում:

Որոշ ժամանակ անց Գարեգինը նշանակվում է դպրոցի տեսուչ: Նա ծավալում է հասարակական կրթադաստիարակչական խոշոր աշխատանքներ՝ հռչակվելով որպես Գարեգին վարժապետ:

Նա դպրոցում կազմակերպում է գրական երեկույթներ և այլ միջոցառումներ, ուր մշտապես ասում էր իր հեղինակավոր խոսքը: Իսկ դպրոցից դուրս նա «...անդուլ կքարոզե, կմխիթարե տգետ ու խեղճ ժողովուրդը, կհորդորե օտարախոս գյուղացիներին հոգ տանիլ իրենց վարժարանին, մշակել մայրենի լեզուն և միշտ հայերեն խոսիլ»[3]: Հայապահպանության կարևոր պայմանը համարում էր հավատն ու լեզուն և հորդորում էր չկորցնել դրանք: Եվ այս առումով բազմաթիվ դասախոսություններ է կարդացել դրպրոցում ու այլ վայրերում:

1861 թվականին Ղարաբաղի հայերի խնդրանքով Մաթևոս կաթողիկոսը Պ. Շանշյանցին նշանակում է Ղարաբաղի Եղիշյան վարժարանի տեսուչ: Շանշյանցը Ղարաբաղ գնալու ճանապարհին անցնում է Թիֆլիս և ուզում է Գարեգինին իր հետ տանել: Ներսիսյանի հոգաբարձությունը առարկում է և թույլ չի տալիս՝ պատճառաբանելով, թե դպրոցի համար նա խիստ կարևոր է ոչ միայն իբրև տեսուչ, այլև իբրև ուսուցիչ: Սակայն Գարեգինը շատ էր ցանկանում լինել իր սիրելի ուսուցչի հետ: Եվ 1864 թվականի արձակուրդներին, հանդիպելով հոգաբարձությանը՝ հրաժարվում է իր այնքան ապահով կյանքից ու պաշտոնից և ճանապարհվում դեպի Շուշի: Կարճ ժամանակում տեղ է հասնում և նորից իր պաշտելի ուսուցչի օգնականն ու գործակիցը դառնալով անսպառ եռանդով նվիրվում է հայ մանուկների կրթության ու կարգացման գործին՝ դասավանդելով մայրենի լեզու, գրականություն, պատմություն և այլ առարկաներ:

Գարեգինը Շանշյանցի չափ սեր ու համակրանք էր վայելում ժողովրդի մեջ: Շատերը հեռավոր վայրերից իրենց երեխաների ձեռքից բռնած բերում էին նրանց դպրոցը:

[1] «Լուսա», Թիֆլիս, 1903, № 5, էջ 223:

[2] «Արևելյան մամուլ», 1903, № 29, էջ 684:

[3] Նույն տեղում, էջ 685:

Տեղի ձեռնահաս և կարող ուժերն էլ, քաջալերված այս երկու հոյակապ անձերի եռանդուն ու անձնուրաց գործունեությամբ, օգնում և աջակցում էին աշակերտների առաջադիմությանը թե՛ նյութապես և թե՛ բարոյապես:

Իր ժողովուրդը նրան կանչում էր հեռուները, ուր գործելու մեծ ասպարեզ կար՝ նոր սերնդին մեծ հայրենասիրությամբ վարակելու, դաս տալու համար:

Հենց նույն տարում էլ Պ. Շանշյանցի և Պ. Պռոշյանի հետ միասին Շուշի քաղաքում հիմնադրում են առաջին օրիորդաց Մարիամյան դպրոցը, որի կանոնադրությունը մշակում են Պ. Պռոշյանը և Գարեգին Մուրադյանը: Իսկ Խորեն Ստեփանեի հետ բացում են մասնավոր դպրոց: Նա դասեր էր տալիս նաև տեղի ունևորների տներում՝ նրանց երեխաներին: Ահա այս ժամանակ էլ ծնվում է սիրո այն դրաման, որը մեծ վիպասան Մուրացանը թեմա է դարձնում «Խորհրդավոր միանձնուհին» վիպակի համար:

Տեղի հարուստներից մեկը, նկատելով Գարեգինի արտակարգ տաղանդը և իր միակ աղջկա համակրանքն ու սերը նրա նկատմամբ, տալիս է իր համաձայնությունը, որ Գարեգինն ամուսնանա աղջկա հետ և դառնա իր ինչքի տերն ու տնօրենը: Սակայն, թեև Գարեգինը մինչև ուղն ու ծուծը սիրահարված էր, բայց մերժում է, քանի որ նա մի քանի տարի առաջ ուխտել էր իր կյանքը նվիրել Հայրենիքին և Եկեղեցուն: Նա գերադասեց իր անձնական երջանկությունը վոհել հանուն իր ուխտի և արցունքոտ աչքերով մերժեց իր սիրած էակի ձեռքը. «Կա մի ուրիշ մարմին,—գրել էր նա դեռ վաղուց,—որ ավելի սիրելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը. այդ մարմինը Հայրենիքն է: Ես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց կատ աշխարհում ուրիշ սեր չճանաչել, նրա ցավերից կատ ուրիշ ցավերով չվշտանալ, նրա բախտավորությունից կատ ուրիշ բախտավորություն չխնդրել»:

Իրոք, Գարեգին վարժապետը իր ողջ կյանքը առանց մնացորդի նվիրաբերեց Հայրենիքին, իր սիրած ժողովրդին:

Հանդիպելով խավարամիտ մարդկանց որոշ հակադրության, վերադառնում է Թիֆլիս, ուսումնասիրում ու թարգմանում Շիլլերի «Վիլիելմ Տելլ» թատերգությունը:

«Երբ վերադարձա ի Թիֆլիս,—գրում է Գարեգին Մուրադյանը,—թախանձում էի քաղաքի ունևոր դասին մասնավոր վարժարան բանալ իրենց զավակաց կրթության համար: ...Արձակուրդի օրերն էին արդեն, մի օր սիրտս բացի իմ սիրելի դաստիարակին և ասացի թե՝ փափագ ունիմ վեց ամսվան համար ուսումնասիրական ճանապարհորդություն կատարել Թուրքիա և այլ տեղեր»:

Սակայն այդ վեց ամսվա մտադրությունը դառնում է նրա ողջ կյանքը, քանի որ ինքն ավելի շատ պետք էր Արևմտյան Հայաստանում գործելու:

Ապրելու, պայքարելու և ստեղծագործելու համար նրան հարկավոր էր ուղիներ որոնել: Միակ ճանապարհը իր ուխտը կատարելու համար մնում էր հոգևորական դառնալ: Անցավ Կ. Պոլիս՝ իրագործելու իր մտադրությունը:

Չարամիտ մարդիկ ամբաստանում են նրան իբրև բողոքական գաղափարներ ունեցող և խանգարում նրա մտադրության իրագործումը: Նա մամուլում հերքեց այդ անհիմն զրպարտությունները: Նա մինչև այդ արդեն բազմաթիվ հոդվածներ էր գրել «Մեղու Հայաստանի» և «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականներում, որոնք նպաստեցին, որ օտար ու անծանոթ շրջապատում կարճ ժամանակ հետո համակրանք ձեռք բերի: Նա մտերմացավ Մ. Մամուրյանի և ազգային ղեկավար Մ. Աղաբեկյանի հետ: Երկու տարի մնաց Կ. Պոլսում և զբաղվեց ուսուցչությամբ:

Հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին, վարք ու բարքին ծանոթանալու, նրա վշտերին կարեկից լինելու և ազատագրական միտքը վառ պահելու միտումը նրան հանգիստ չէր տալիս: 1867 թվականին այցելեց Երուսաղեմ: Եսայի Պատրիարքը, որն արդեն ծանոթ էր նրան, արժանավայել կերպով ընդունեց նրան Սրբոց Հակոբյանց վանքում: Գիտենալով նրա մանկավարժական հմտություններն ու գիտական կարողությունները, մի օր նրան հրավիրում է տեղի վարժարան և զրուցել տալիս տաների հետ՝ նրանց գիտելիքներին ծանոթանալու նկատառումով: Դրանից Գարեգին Մուրադյանը պարզում է, որ նրանք իրենց գիտելիքներով շատ ետ են մնում: Այդ ժամանակ Եսայի Պատրիարքը հայտնում է կանխամտածածը. «Այժմ խիղճդ կներե՞ թողուլ զանազան կողմերե եկած ուսումնածարավ մանուկներն այս ողորմելի վիճակին մեջ ու մենկնիլ»: Ավելի համոզիչ փաստարկելու համար դրան նա ավելացնում է նաև այն հանգամանքը, որ «Սիոն» ամսագրի հրատարակությունն էլ գտնվում է անկարողների տրամադրության տակ: Գարեգինը, որ մտադրված էր հեռանալ, համոզվում է, որ ինքն ավելի օգտավետ կլինի այստեղ մնալով: Նա ընդունում է Պատրիարքի առաջարկությունը:

Նրա մնալուց և որոշ ժամանակ աշխատելուց հետո նոր մի հրաշալի շրջան է սկսվում

Ժառանգավորաց վարժարանի և ընդհանրապես Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի կյանքում: Նա իր ջանասեր, բարյացակամ վերաբերմունքով և աշխատասիրությամբ կարճ ժամանակում կազմում է ուսումնական ծրագրեր, կանոնավորում առարկաների դասավանդման մեթոդներն ու ձևերը: Այս տարիներին էլ նա կազմեց ու տպագրեց մի շարք դասագրքեր, գրքեր ու բարոյախոսական, խրատական, հայրենասիրական հոդվածներ: Արդեն ընտրությունը կատարել էր և որոշեց կուսակրոն դառնալ: 1869 թվականին, Կաթողիկեի տոնին, Եսայի Պատրիարքը նրան ձեռնադրեց վարդապետ՝ վերանվանելով Մելքիսեդեկ:

Մելքիսեդեկ վարդապետը նոր ոգևորությամբ սկսեց իր հոգևոր, տեսչական, ուսուցչական և հասարակական գործունեությունը: Նրան օտար չէր եկեղեցական կյանքը: Կարճ ժամանակ անց Պատրիարքի աջակցությամբ Ներսիսյան դպրոցի կացութաձևը, դասավանդման մեթոդները սկսեցին կիրառվել այստեղ: Ականատեսները գրում են, որ դպրոցը արտակարգ առաջադիմության հասավ: Այդ բանի ապացույցն է այն, որ ամեն տեղից գալիս էին աշակերտելու **Գարեգին վարժապետին:** Դիմողներն այնքան շատ էին, որ Մելքիսեդեկ վրդ. Մուրադյանը «Սիոն» հանդեսում տպագրեց հայտարարություն, որ իրենց դպրոցի հնարավորությունները այնքան մեծ չեն և բոլոր դիմողներին ընդունել չեն կարող: Նրա բազմաթիվ սաներ հասան բարձր պաշտոնների:

Մելքիսեդեկ վարդապետի ջանքերով նոր եռանդ, աշխուժություն է ստանում նաև վանքի մատենադարանը, թանգարանը, տպարանը, վիմագրատունը: Բարձրացավ տպարանային գործի որակը և «Սիոն» ամսագրի հոդվածների գրագիտական մակարդակը: Նրանց համագործակցությունը մեծ հեղինակություն բերեց Սրբոց Հակոբյանց վանքի միաբանությանը: Մելքիսեդեկ վարդապետը դառնում է Սրբոց Հակոբյանց վանքի հոգին: Իր շուրջն է համախմբում միաբանությանը իր իմացությամբ, աշխատասիրությամբ, իր նվիրումով վարակում բոլորին: Նրա երաշխավորությամբ և անմիջական օգնությամբ իր սաներից շատերին ուղարկում են Կ. Պոլիս՝ գիտության մեջ ավելի կատարելագործվելու: Նա դիմում է նաև վանական տնօրեն խորհրդին՝ ավելի լավ ուսանողներից ուղարկելու Եվրոպա՝ բնական գիտությունների մեջ խորանալու: Սակայն ինչ-ինչ խավարամիտ առարկություններով արգելվում է, որը չափազանց շատ է դառնացնում նրա բարի հոգին: Դրա անհրաժեշտությունը խիստ էր զգացվում, քանի որ Ժառանգավորաց դպրոցում մինչ այդ դասավանդում էին 10 առարկա, իսկ Մելքիսեդեկ վարդապետը դրանց թիվը կրկնապատկեց: Այդ առարկաների մի զգալի մասը դասավանդում էր ինքը. ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, աշխարհագրություն: Դասավանդում էին մի քանի լեզուներ և բնական այլ գիտություններ՝ ֆիզիկա, քիմիա, աստղաբաշխություն և այլն: Բարձրացել էր «Սիոն» ամսագրի գիտական մակարդակը:

Մի աննախընթաց թափ ստացավ տպագրության գործը: Հետաքրքրությունը բարձրացել էր դեպի Մելքիսեդեկ վարդապետի գործունեությունը, և հարուստները բավական մեծ նվիրատվություններ ու դրամական հսկայական միջոցներ էին հատկացնում:

Մելքիսեդեկ վարդապետը գիտական աշխարհին շփվելու, գիտության նորություններ ստանալու, հայաբնակ գաղութներին ծանոթանալու, նրանց մոտ հայապահպանության ոգին բարձրացնելու համար 1873 թվականին սկսեց ճանապարհորդել եվրոպական երկրներում՝ Ռումինիա, Տրանսիլվանիա, Հունգարիա, Ավստրիա, Գերմանիա, Լեհաստան, Շվեյցարիա, Իտալիա և այցելեց այնտեղի հայ գաղթօջախներ ու ծանոթացավ նրանց կյանքին: Իր տպավորությունների մասին մի շարք հոդվածներ ուղարկեց «Մասիս» լրագրին և «Սիոն» ամսագրին: Դրանցից էլ արտատպում էին մյուս հայերեն պարբերականները: Նա խորը կսկիծով, ցավով ու արցունքով է ներկայացնում ուծացման ահավոր գործընթացը[4]: Նույնիսկ շատ գաղութներում չեն իմացել, թե գոյություն ունի հայություն, մտածել են, թե իրենք վերջին հայերն են, որոնք ապրում են: Նրանցից շատերը հավիվ էին խոսում հայերեն կամ բոլորովին մոռացել էին:

Նա ամեն տեղ դասախոսություններ է կարդացել հայ մշակույթի, դպրոցի կրթության, մայրենի լեզուն ու հավատը պահպանելու մասին: Նա գրում է. «Սույն օտարամոլության և անգիտության պատճառով է ահա, որ օտարաց դպրոցները կբազմանան և կհարատևեն, իսկ մեր ազգային վարժարաններն շարունակ կծփան ու կերերին իրենց անկայուն վիճակի մեջ: Օտարք կշահին նյութապես, մեք կվնասեմք նյութապես և բարոյապես: Օտարք կշոյեն մեր օտարամոլությունն և մեք կպարտիմք և կքաջալերեմք իրենց վարդապետություն»[5]:

Երբ վերադառնում է Երուսաղեմ, փոխված է տեսնում վանքի դրությունը, զգում է միա-

[4] «Սիոն», 1874, № 5, էջ 97—103:

[5] «Մասիս», 1873, 4 օգոստոսի, № 1418;

բանության սառն անտարբերությունը, նախանձը և հակառակությունը: Եվ այդ ապերախտությունը երկար չկարողացավ տանել ու մնալ այնտեղ: Ստիպված տեղափոխվեց Կ. Պոլիս՝ տասը տարի Սրբոց Հակոբյանց վանքում աշխատելուց հետո:

Իբրև լավագույն մանկավարժ, պերճախոս հոգևորական և գրչի ու գրականության մարդ լավ հայտնի էր նաև Զմյուռնիայում, ուր նա քանիցս այցելել էր և համակրանք վայելել: Այս համակրանքն այնքան բարձր էր, որ 1877 թվականի հունվարի 19-ին Զմյուռնիայի գավառական ժողովը բացարձակ քվեարկությամբ նրան ընտրեց առաջնորդական պաշտոնում: Նա մեծ սիրով ընդունեց այդ և նույն տարվա մարտի 3-ին իր օծակից Մակար վարդապետի հետ հասավ Իզմիր: Նա ցնծագին ընդունելության արժանացավ: Այստեղ էլ նա խորապես նվիրվում է Եկեղեցու պայծառացմանը, հայ դպրոցի առաջադիմությանը և ազգային ամեն մի հաստատության բարգավաճմանը: Կանոնավորում է վարչական ու դեկավար մարմինները, ամրապնդում նրանց կապը ժողովրդի հետ և արժանանում համակրանքի: Ամենուրեք փառաբանում էին նրա բարեգործական գործունեությունը: Նա առանձնապես վայելում է տեղի մտավորականության համակրությունը: Հատկապես նա մտերմանում է «Արևելյան մամուլի» խմբագիր Մաթևոս Մամուրյանի հետ: Նրանց հոգեհարազատությունն ու գաղափարական համակրությունը մեծ նպաստ է բերում Զմյուռնիայի հայությանը:

Մի քանի տարվա ընթացքում նա այնպիսի ժողովրդականություն վայելեց, որ Պատրիարքարանի կողմից տրվեց եպիսկոպոսական վկայագիր և 1879 թվականի ապրիլի 19-ին նա ճանապարհվեց Էջմիածին՝ կոչումն ստանալու: Մայիսի 27-ին Գևորգ Դ կաթողիկոսի կողմից ձեռնադրվեց եպիսկոպոս:

Էջմիածնում Զմյուռնիային վերաբերվող բազում հարցեր կանոնավորելուց հետո՝ օգոստոս ամսին վերադարձավ:

Մելքիսեդեկ եպիսկոպոսի առաջնորդությամբ Զմյուռնիայում մեծ հեղաշրջում կատարվեց՝ եկեղեցական, դպրոցական ու հասարակական գործերում: Նրա օրոք վերակառուցվեցին Մեսրոպյան և Հռիփսիմյան միջնակարգ ուսումնարանները, ուր նա դասախոսում էր հայագիտական առարկաներ: Նրա ջանքերով շինվեց Ս. Լուսավորչյան հիվանդանոցը, բարեփոխվեց գերեզմանատունը, ծայրամասերում և այլ տեղերում բացվեց կրթական հաստատություններ: Նրան այս հարցերում օգնում էին Սպարթալյան եղբայրները:

Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը իր բազմակողմանի ազգօգուտ գործունեությամբ Թիֆլիսում, Շուշիում, Կ. Պոլսում, Երուսաղեմում և ապա Զմյուռնիայում այն աստիճան մեծ ժողովրդականություն էր վայելում, որ Գևորգ Դ կաթողիկոսի մահից հետո կաթողիկոսական ընտրության համազգային ժողովում երկու անգամ (1884 և 1885 թթ.) ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոսության թեկնածու, սակայն կանոնական հանգամանքներ խանգարեցին կաթողիկոս դառնալուն:

Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյանը նրան, համեմատում է մեր հնագույն երևելիներին. «Խոսրով Անձևացիի, Նարեկացիի, Լամբրոնացիի գծերը կցոլացնե Մուրադյանցը իր վարդապետական և եպիսկոպոսական կյանքին մեջ[6]:

Ընտրությունից հետո Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը վերադարձավ Զմյուռնիա և 1888 թվականին, 11 տարի առաջնորդական պաշտոնում մնալուց հետո, հրաժարվելով վերադարձավ Կ. Պոլիս: Ապա առանձնանալով, շուրջ տասը տարի քարոզչի պաշտոն վարեց Գրիգոր Թոփրաք՝ Գատը գյուղի եկեղեցում՝ միաժամանակ դասավանդելով Կենտրոնական վարժարանում: Ի դեպ այստեղ է նրան աշակերտել ապագա խոշոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, որը մեծ երախտագիտությամբ է գրել իր ուսուցչի մասին իր «Կյանքիս հուշերից» աշխատության մեջ:

Կ. Պոլսում ապրելու տարիներին նա նվիրվեց գրական-ստեղծագործական աշխատանքի և հրապարակեց «Երկու խոսք», «Հովվական աստվածաբանություն», «Ընդհանուր Եկեղեցվո պատմություն», «Պետրոս Շանշյանց: Կենսագրություն», «Պատասխան Լևոն ԺԳ Պապի կոնդակին» և այլ գործեր: Վերջինս թարգմանվել և հրապարակվել է եվրոպական լեզուներով: Ունեցել է հայերեն մի քանի հրատարակություն, նույնիսկ՝ ետմահու: Այսօր էլ այդ գործը կրոնական-գաղափարական պայքարի մեջ է ընդդեմ Հայ Առաքելական Եկեղեցու կաթոլիկացման:

1898 թվականին Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը Զմյուռնիայի հայության միաձայն ընտրությամբ նորից ստանձնեց այդ թեմի առաջնորդությունը, որը վարեց մի քանի տարի: Սակայն ծերությունը և հիվանդության ուժեղացումը սկսել էին նրան սպառնալ: Նա չկարողացավ կատարել այն, ինչ տրամադրվել էր անել այդ թեմի համար: Երկու տար-

[6] «Արևելյան մամուլ», 1903, № 34:

վա ծանր հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց 1903 թվականի հուլիսի 12-ին, 67 տարեկան հասակում: Այսպես ավարտվեց Հայ Եկեղեցու, մանկավարժության ու մշակույթի պայծառ ջահերից մեկի կյանքը:

«Արևելյան մամուլ»-ից[7] տեղեկանում ենք, թե նրա մահը սգացել է ողջ հայությունը: Իսկ հուղարկավորությունը կատարվել է սգո մեծ արարողությամբ: Դամբանականներ են ասվել բոլոր կազմակերպությունների ու հիմնարկությունների ներկայացուցիչների կողմից: Բանաստեղծ Ռուբեն Որբերյանը մահախոսականում գրում է, որ նա մեծ հայրենասեր էր և «... Մուրադյանց բարձրացավ մինչև անմերձենալին...»:

[7] «Արևելյան մամուլ», 1903, № 29, էջ 700:

Նրան թաղում են Զմյուռնիայի Ս. Ստեփանոս եկեղեցու գավթում:

Հիշելով մեր մեծ հայրենասերին, մտաբերում ես Մուրացանի խոսքերը քույր Անանայի շիրիմի առաջ. «Այդ կանաչապարդ շիրիմի մեջ հանգչում էր Հայրենիքի սուրբ սիրո նահատակը՝ մարմնացյալ անձնավորությունը, որ սրի դեմ չէր գնացել, վառոդի դեմ չէր խիպախել, բայց մղել էր նույն կռիվը, ինչ որ ամեն մի մեծ հերոս... Ո՞ր ճշմարիտ հայրենասերը չէր խոնարհիլ յուր գլուխը այդ սրբական շիրմի առաջ և ո՞ր երիտասարդի սրտին՝ սեր ու եռանդ չէր ներշնչիլ»[8]:

[8] **Մուրացան**, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1961, էջ 468: